Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
ապրիլի 18-ի N 553 - Ն որոշման

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ «ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ» (ԱՏԳ ԱԱ) ԴԱՍԱԿԱՐԳՉԻ 2201 10 110 0, 2201 10 190 0, 2201 10 900 0, 2201 90 000 0 ԾԱԾԿԱԳՐԵՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կանոններով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2201 10 110 0, 2201 10 190 0, 2201 10 900 0, 2201 90 000 0 ծածկագրերին դասվող ապրանքների (այսուհետ՝ ջրեր)՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից 2021 թվականի մարտի 5-ին հաստատված Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման համակարգի հիմնական տեխնոլոգիական կազմակերպական մոդելի (այսուհետ՝ հիմնական մոդել) համաձայն դրոշմավորման հետ կապված հարաբերությունները:

2. Ջրերի դրոշմավորման համար օգտագործվում է նույնականացման միջոց՝ նիշերի եզակի հաջորդականություն, որը ներկայացված է մեքենայական ընթերցման համար հարմար Data Matrix GS1 ձևաչափով երկչափ շտրիխ կոդի տեսքով և ձևավորված է ISO/IEC 16022:2006 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան «Տեղեկատվական տեխնոլոգիաներ: Ավտոմատ նույնականացման և տվյալների հավաքագրման տեխնոլոգիաներ: Data Matrix ձևաչափով շտրիխ ծածկագրի սիմվոլիկայի տեխնիկական հատկորոշիչ» կամ դրան նույնական Եվրասիական տնտեսական միության անդամ պետության ազգային ստանդարտի սիմվոլիկայի հստակեցում: Դրոշմավորման ծածկագիրը նույնակա-

նացման միջոցի վերափոխելիս պետք է կիրառվի ECC 200-ի սիմվոլիկան՝ օգտագործելով FNC1 նշանը՝ որպես տվյալների համապատասխանության նշան GS1-ի կիրառման նույնացուցիչների (AI) տիպային ձևաչափին:

3. Մինչև սույն որոշման 1-ին կետով սահմանված ժամկետին նախորդող օրը ներառյալ ներկայացված՝ օրենսգրքի 393-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ դրոշմապիտակների տրամադրման հայտերի (այսուհետ՝ հայտեր) հիման վրա ստացված դրոշմապիտակներով՝ օրենսգրքով սահմանված կարգով դրոշմավորված լինելու դեպքում ջրերը կարող են չդրոշմավորվել հիմնական մոդելի համաձայն:

4. Սույն որոշման 1-ին կետով սահմանված ժամկետից սկսած ներկայացված հայտերի հիման վրա ստացված դրոշմապիտակների վերաբերյալ ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերագրման, հաշվառման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով գրանցումներ ջրերի համար չեն կարող կատարվել:

5. Ջրերի անհատական (սպառողական) փաթեթավորման թվային նույնականացման միջոցը ներառում է դրոշմավորման ծածկագիր՝ բաղկացած տվյալների 3 խմբից, որոնցից առաջինն ու երկրորդը ձևավորում են ջրի անհատական (սպառողական) փաթեթավորման նույնականացման ծածկագիրը, իսկ երրորդ խումբը՝ ստուգման ծածկագիրը: Ընդ որում՝

1) առաջին խումբը բաղկացած է 14 թվանշանից (առևտրային միավորի գլոբալ նույնականացման համարը (GTIN)) և ներառում է ապրանքի ծածկագիրը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (01), որը գեներացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված ազգային օպերատորի (այսուհետ՝ օպերատոր) կողմից՝ հիմնվելով տնտեսավարողի՝ վերը նշված արտադրանքի վերաբերյալ տրամադրած տեղեկատվության վրա.

2) երկրորդ խումբը բաղկացած է 13 նիշից (թվեր, լատինատառ այբուբենի մեծատառեր ու փոքրատառեր, ինչպես նաև հատուկ նիշեր (!"%&'()*+,-./_:;=<>?)) և ներառում է արտադրանքի անհատական (սպառողական) փաթեթավորման անհատական սերիական համարը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը

(21), որը գեներացվում է օպերատորի կամ տնտեսավարողի կողմից (տվյալների այս խմբի եզրափակիչ նիշը հանդիսանում է նիշ-բաժանարարը, որն ունի «29» ծածկագիրը ASCII նիշերի աղյուսակում).

3) երրորդ խումբը բաղկացած է 4 նիշից (թվեր, լատինատառ այբուբենի մեծատառեր ու փոքրատառեր, ինչպես նաև հատուկ նիշեր (!"%&'()*+,-./_:;=<>?)) և ներառում է ստուգման ծածկագիրը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (93) և որը գեներացվում է օպերատորի կողմից:

6. Նույնականացման միջոցը կիրառվում է անհատական (սպառողական) փաթեթավորման պիտակի կամ կպչուն պիտակի վրա այնպիսի մեթոդով, որը թույլ չի տալիս նույնականացման միջոցն առանձնացնել փաթեթից: Նույնականացման միջոցը չի կարող կիրառվել սպառողական փաթեթավորման այնպիսի մասերի վրա, որոնք առանց վնասվելու կարող են կառուցվածքային տարանջատվել: Անհատական (սպառողական) փաթեթավորման վրա նույնականացման միջոցը կիրառվում է փաթեթավորման ցանկացած հատվածի վրա, այդ թվում՝ խցանափակման միջոցի վրա, բացի փաթեթավորման ստորին հատվածից (հատակից):

7. Կախված յուրաքանչյուր դյույմի վրա տպագրության կետերի քանակից՝ նույնականացման միջոցի չափսը կարող է լինել համաձայն հետևյալ սանդղակի՝

1) 200 կետ յուրաքանչուր դյույմի վրա - 11. 2x11. 2 միլիմետր կամ 14. 0x14. 0 միլիմետր.

2) 300 կետ յուրաքանչուր դյույմի վրա - 9. 3x9. 3 միլիմետր, 11. 2x11. 2 միլիմետր, 13. 0x13. 0 միլիմետր կամ 14. 9x14. 9 միլիմետր.

3) 450 կետ յուրաքանչուր դյույմի վրա - 8. 7x8. 7 միլիմետր, 9. 9x9. 9 միլիմետր, 11. 2x11. 2 միլիմետր, 12. 4x14. 4 միլիմետր, 13. 7x13. 7 միլիմետր, 14. 9x14. 9 միլիմետր կամ 16. 1x16. 1 միլիմետր.

4) 600 կետ յուրաքանչուր դյույմի վրա – 7. 5x7. 5 միլիմետր, 8. 4x8. 4 միլիմետր, 9. 3x9. 3 միլիմետր, 10. 2x10. 2 միլիմետր, 11. 2x11. 2 միլիմետր, 12. 1x12. 1 միլիմետր, 13. 0x13. 0 միլիմետր, 14. 0x14. 0 միլիմետր, 14. 9x14. 9 միլիմետր կամ 15. 8x15. 8 միլիմետր:

8. Անհատական (սպառողական) փաթեթավորման և (կամ) կպչուն պիտակի վրա կիրառվող նույնականացման միջոցը չպետք է տպագրվի փաթեթավորման թափանցիկ թաղանթի վրա: Պիտակի վրա չպետք է լինի մեկ այլ տեղեկատվություն, որը կխոչընդոտի նույնականացման միջոցի ընթերցմանը: Նույնականացման միջոցը պետք է տեղադրվի այնպես, որ չխախտվի արտադրանքի փաթեթավորման վրա կիրառված տեղեկատվության ամբողջականությունը՝ տեխնիկական կանոնակարգման ոլորտի նորմատիվային փաստաթղթերի պահանջների համաձայն:

9. Կիրառման պահանջներն են՝

1) արտադրանքի անհատական (սպառողական) փաթեթավորման վրա կիրառելու համար պետք է օգտագործվի այնպիսի տեխնոլոգիա, որն ապահովում է փաթեթավորման վրա կիրառված նույնականացման միջոցների ընթերցումը կիրառելու պահից մինչև արտադրանքը սպառողին վաճառելու պահը.

2) չի թույլատրվում փաթեթավորման վրա տպել արտադրանքի փաթեթավորման որևէ տարր, որը ծածկում է մակերեսը և դժվարացնում նույնականացման միջոցների ընթերցումը:

10. Ձրերի փաթեթավորման վրա նույնականացման միջոցները կիրառելու համար օգտագործվում են մակնշման հետևյալ հիմնական եղանակները՝

1) մակնշման ուղիղ եղանակ (ներառում է կիրառման տարբեր հնարավորություններ՝ լազերային կիրառում, ջերմային փոխանցում: Ծածկագիրը պետք է կիրառվի դրա համար պատրաստված մակերեսի վրա և ապահովի հակադրության ցանկալի մակարդակը, ծածկագրի շուրջ անհրաժեշտ ազատ գոտին).

2) պիտակավորում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ